

DOI: 10.57192/18291864-2023.1-129

Լալիկ Մ. Խաչատրյան
Բանասիր. գիյր. դոկտոր

**ՄԱՐՄՆԱՄԱՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԳՐԱԲԱՐՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԾԻՆ
ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**
(համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետեր)*

Բանալի բառեր – փոխակերպում, վերլուծական կառույց, անվանաբայական հարադրություն, մարմնամասերի անվանումներ, բաղադրյալ բայեր, իմաստափոխություն, կառուցատիպ, սերիչ կաղապար:

Հոդվածում դիտարկվում են հին հայերենի վերլուծական կառույցների փոխակերպումները կցական բարդությունների. երևույթը քննվում է ինչպես գրաբարյան համաժամանակյա գոյավիճակում, այնպես էլ գրաբար-արդի հայերեն տարժամանակյա դիտվածքում: Քննության ոլորտ են ընդգրկվել անվանաբայական հարադրությունները, որոնց արտահայտության պլաններում կան մարմնամասերի անվանումներ: Որպես բայական հարադրությունների այդօրինակ բաղադրիչներ հանդես են գալիս **ակն, ձեռն, ունկն, ծունր, արիւն, դէմք** և այլ բառեր:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կարգի հարադրություններից սերած կցական բարդությունները ձևավորվել են հետևյալ կառուցատիպերով՝

ա) բաղադրիչների ձուլմամբ, ինչպես՝ **ակն ածել > ակնածել, ակն ունիմ > ակնունիմ//ակնկալել, զակն արկանել > ակնար-**

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.11.2022:

Վէմ համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 1 (81), հունվար-մարտ, 2023

կեն, ձեռն հասանել > ձեռնհաս, դնեմ գձեռն (ի վերայ ուրուք) > ձեռնադրեմ և այլն,

բ) ածանցմամբ, ընդ որում՝ այդ բարդություններն առանց ածանցի չեն գործածվում, ինչպես՝ **յակն առնում > ակնառու//աչառու, ըմպել գարին > արինարբու** և այլն:

Դիտարկված բառակապակցությունները հին հայերենում վերածվել են համադրական (կցական) բարդությունների և փոխանցվել արդի հայերենին:

Լեզվի համաժամանակյա կտրվածքում որոշակի բառիմաստով և քերականական արժեքով բնորոշվող լեզվական միավորները տարժամանակյա դիտվածքում կարող են ենթարկվել իմաստակառուցվածքային տարաբնույթ փոփոխությունների, որոնց հետևանքով կարող են փոխվել նաև նրանց բառական ու քերականական իմաստները, դրանց արտահայտման լեզվաքերականական միջոցները, իսկ որոշ միավորներ էլ կարող են վերաիմաստավորվել՝ ձեռք բերելով նոր իմաստներ ու արժեքներ: Այդ կարգի փոփոխություններն ունեն լեզվական-տրամաբանական որոշակի հիմքեր, որոնց մեջ կարևորվում է փոխակերպման (փոխկադապարման) իրողությունը:

Փոխակերպման գործընթացի ուսումնասիրությունը բացահայտում է սերման որոշակի կադապարներ, որոնք վերացարկված մտածողության տարբեր աստիճանների դրսևորումներ են: Լեզվի փիլիսոփայության տեսանկյունից սերման կադապարներ են միջուկային նախադասություններն ու բառակապակցությունները, որոնցից սերում են բաղադրյալ բառերի կադապարները՝ որպես արդյունք **նախադասություն – բառակապակցություն** փոխակերպական գործընթացի¹: Փոխակերպման գծային պլանում բառակապակցությունները բնութագրվում են երկակի արժեքով՝ նախ՝ որպես միջուկային նախադասությունների փոխակերպման հետևանք, ապա՝ որպես սերող կադապարներ բաղադրյալ բառերի ձևավորման համատեքստում²:

Փոխակերպման ուրույն ուղի են անցել որոշ բայական կապակցություններ կամ բայակապակցություններ, որոնց «բաղադրամա-

1 Տե՛ս **Զահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 565:

2 Սույն հոդվածում **բաղադրյալ բառեր** հասկացության շրջանակներում քննելու ենք միայն համարական բարդությունների առաջացումը վերլուծականությունից կցականություն անցմամբ:

սերը ժամանակի ընթացքում միաձուլվում են և դառնում իբրև ամբողջական՝ բաղադրյալ բայեր, օրինակ՝ *գործածել* (հին՝ ի գործածեն), *ակնսարկել* (հին՝ ակն «աչք» և արկանեն «ձգել, գցել, նետել»), *ունկնդրել* (հին՝ ունկն «ականջ» և դնեն «դնել»), *ակնածել* (հին՝ ակն ածեն), *քարկոծել* (հին՝ «քարով կոծել՝ ծեծել»), *մրածել* (հին՝ զմտաւ ածել) և այլն»³:

Ինչպես ցույց են տալիս վկայված օրինակները, որոշ բայական բառույթներ ժամանակի ընթացքում վերլուծականությունից անցել են կցականության: Հայ քերականագիտության մեջ վերլուծական կամ հարադրական բայերը որոշակիորեն տարբերակվում են համադրական կամ միաձույլ բարդություններից: Թեև համադրական բարդության մի տեսակը՝ կցականը, և հարադրությունը համարվում են անիսկական բարդություն, սակայն որոշ հատկանիշներով կցական բարդություններն ավելի մոտենում են իսկական բարդություններին, ինչն ամենից առաջ արտահայտվում է դրանց ձևային դրսևորումներում: Իմաստային առումով կցական բարդությունները չունեն իսկականներին հատուկ բաղադրիչների սերտությունը, ուստի և հեշտությամբ կարող են տրոհվել ըստ հիմնական բաղադրիչների՝ անկախ բառական շեշտով՝ այդ պատճառով էլ դասվելով անիսկական բարդությունների շարքը⁴:

Արդի հայերենում, ըստ բառակազմական եղանակների ու կառուցվածքային առանձնահատկությունների, առանձնացվում են բարդությունների կամ բարդ բառերի հետևյալ տեսակները՝ **բուն** կամ **իսկական, կցական** կամ **կապակցական, կրկնական** և **հատվածական**:

Կցական բարդությունները բոլոր բարդությունների նման ունեն մեկ բառային արտահայտություն, բայց և մյուս բարդություններից տարբերվում են նրանով, որ «այդ մեկ բառն ստացվում է բառերից կազմված կապակցություններից»⁵: **Բառերից կազմված կապակցությունները** բառակապակցություններ են՝ ազատ կամ կայուն, բայական կամ անվանական, հատվածական և այլն: Այդ բառակապակցություն-

3 Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 94:

4 Տե՛ս Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, գ. Ա, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 163:

5 Զահուկյան Գ., Աղայան Էդ. և ուրիշներ, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Եր., «Լույս» հրատ., 1980, էջ 429-443:

ները լեզվի տարժամանակյա կտրվածքում կարող են փոխակերպման (փոխկադապարման) հետևանքով վերածվել համադրական (կցական) բարդությունների՝ պահպանելով բաղադրիչների իմաստներն ու դրանց շարահյուսական հարաբերությունները, կամ էլ մասնակիորեն ենթարկվել իմաստափոխության՝ դրսևորելով իմաստային նրբերանգներ սերիչ կադապարների համեմատ:

Ինչպես նշում է Ա. Աբրահամյանը, հարադրական բարդությունների նկատմամբ համադրական բառույթներն իրենց կազմության առանձնահատկություններով ավելի բարձր մակարդակում են. դրանց մեջ բայական իմաստի վերացարկումն ու քերականական ընդհանրացումն ավելի ակնառու են⁶:

Մ. Աբեղյանը հարադրական բայերից կցական բարդությունների առաջացման առնչությամբ նկատում է, որ երբ հարադրական բայերի բներից նոր բառեր են կազմվում, վերջիններիս մեջ հարադիրն ու իր բայի բունը միացած իբրև մեկ բառ են գրվում, որովհետև բարդության երկրորդ անդամը չի գործածվում այն ձևով ու նշանակությամբ, որ ունի բարդության մեջ: Նա բերում է հետևյալ օրինակները՝ **հանձն առնուլ** (գրաբար՝ յանձն առնուլ), բայց՝ *հանձնառու*, **վրեժ խնդրել**, բայց՝ *վրեժխնդիր*, **վրեժ առնել** (գրաբար՝ վրեժ առնուլ), բայց՝ *վրիժառու*: Կցական բարդություններ կազմվել են գրաբարում նույն եղանակով, ինչպես՝ **հանձնարար** (գրաբար՝ յանձն առնել), **հուշարար** (գրաբար՝ յուշ առնել, **յուշ արարի** ձևից) և այլն⁷:

Էդ. Աղայանը, անդրադառնալով կցական բարդությունների հատկանիշներին, այն տեսակետն է արտահայտում, որ դրանք ստացվում են ոչ թե բաղադրական հիմքերի, այլ տարբեր կարգի բառակապակցությունների անդամների միավորումով, ըստ որում՝ կապակցության (անդամների միավորման) եղանակն է կցումը (ագլյուտինացիան)⁸: Հարադրություններից առաջացած բարդությունների տեսակի որոշման համար Էդ. Աղայանն առաջարկում է բաղադրիչների անջատման հետընթաց քայլը, այսինքն՝ եթե հնարավոր է բարդությունից «ստանալ» հարադրություն, ապա այն կցական է, իսկ եթե բարդությունները չեն կարող վերածվել կապակցության (հարա-

6 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 158:

7 Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., «Միտք» հրատ., 1965, էջ 174:

8 Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1984, էջ 274:

դրությունների կամ լրացական բառակապակցությունների, հատվածական բարդությունների և այլն), ապա դրանք այլևս չեն կարող դիտվել որպես կցական բարդություններ, ինչպես՝ **հանձնարար, հուշարար, ակնկալել, օրենսդիր, կիրառել** և այլն⁹:

Այստեղ առարկության հիմք կարող է տալ հետևյալ հարցադրումը. ինչպե՞ս վարվել այն համադրական բարդությունների հետ, որոնք գործածական են արդի հայերենում, սակայն բաղադրիչների հետընթաց անջատումով հարադրության չեն վերածվում, մինչդեռ գրաբարում դրանք հարադրություններ էին: Այսպես՝ դիտարկենք գրաբարից արդի հայերենին անցած **արյունակից** և **մտածել** բառերը: Առաջարկված մոտեցմամբ՝ **արյունակից**-ը կարող է տրոհվել հարադրության՝ **արյան կցորդ**, հետևապես կցական բարդություն է, իսկ **մտածել**-ը արդի հայերենում չի տրոհվում **միտք ածել** հարադրության, հետևաբար կցական բարդություն չէ: Բայց չէ՞ որ այդ հարադրությունը գրաբարում լիարժեք բառային ձևավորում և նշանակություն ուներ: Այլ կերպ ասած՝ **մտածեմ** բառը գրաբարում կցական բարդություն էր, իսկ արդի հայերենում՝ ոչ: Հետևաբար բարդության տեսակի որոշման սկզբունքը պետք է ընդհանուր լինի սովյալ լեզվի բոլոր գոյավիճակների համար:

Չխորանալով երևույթի տարատեսակ դրսևորումների նկարագրության մեջ՝ փորձենք ցույց տալ հին հայերենի վերլուծական կառույցների փոխակերպումը կցական բարդությունների՝ երևույթը քննելով ինչպես գրաբարի գոյավիճակում, այնպես էլ գրաբար-արդի հայերեն տարժամանակյա դիտվածքում: Ելնելով հողվածին ներկայացվող ծավալային պահանջներից՝ քննելու ենք միայն անվանաբայական հարադրությունները, ընդ որում՝ վերլուծական այն կառույցները, որոնց արտահայտության պլաններում կան **մարմնամասերի անվանումներ**:

Մարմնամասերի անվանումները նյութական կամ վերացական անուններ են, որոնք զգալի տեսակարար կշիռ ունեն ազատ և կա-

9 Տե՛ս նույն տեղում: Այդ նույն միտքը նույն օրինակներով վկայաբերում է նաև Հ. Պետրոսյանը (տե՛ս «Հայերենագիտական բառարան», Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 139-140): Նկատենք, սակայն, որ այդ նույն օրինակները Մ. Աբեղյանը բերում է որպես գրաբարյան հարադրություններից առաջացած **կցական բարդություններ**. հարցն այդ բառերն արժևորելու տարժամանակյա հայեցակետն է: Պրանք հին հայերենում (գուցե նաև նախագրային շրջանում) արդեն հարադրություններից առաջացած կցական բարդություններ էին, ուստի կարող է թյուրըմբռնում առաջանալ, եթե գրաբարյան բարդությունները գնահատում ենք արդի հայերենի բարդություններին ներկայացվող չափանիշներով:

յուն կապակցությունների արտահայտության պլաններում որպես կառույցի բաղադրիչներ՝ հանդես գալով ուղիղ և փոխաբերական իմաստներով¹⁰: Հին հայերենում որպես բայական հարադրությունների անվանական բաղադրիչներ հանդես էին գալիս **ակն, ձեռն, ունկն, ծունր, արիւն, դէմք** և այլ բառեր: Նկատի ունենք հենց այդ բառերը, քանի որ դրանցով կազմված բայական հարադրություններն են բաղադրիչների ձուլմամբ վերածվել կցական բարդությունների: Ընդ որում, վերլուծականությունից կցականություն անցումը կարելի է դիտարկել ինչպես գրաբարի մակարդակում (համաժամանակյա հայեցակետ), այնպես էլ գրաբար-արդի հայերեն կտրվածքում (տարժամանակյա հայեցակետ):

Քննենք մարմնամասերի անվանումներով կազմված հարադրությունների իմաստակառուցվածքային յուրահատկությունները գրաբարում, դրանցից կազմված կցական բարդությունների իմաստներն ու դրսևորումները ինչպես գրաբարում, այնպես էլ արդի հայերենում: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ հարադրություններից սերած կցական բարդությունները հանդես են գալիս երկու կառուցատիպով՝ մի դեպքում՝ իբրև բաղադրիչների ձուլմամբ կազմված բարդություններ, մյուս դեպքում՝ իբրև ածանցավոր կազմություններ, որոնք առանց ածանցի չեն գործածվում:

Ակն անվանական բաղադրիչով գրաբարում հանդիպում են այնպիսի հարադրություններ, որոնք արդի հայերենում վերածվել են կցական բարդությունների: Այսպես.

Ակն ածել «պատկառել, զգուշանալ. վախենալ». հմմտ. «Սաւուղ **ակն ածէր** յերեսաց նորա» (Ա Թագ., ԺԸ, 15), «Թագաւորեցոյց զԱրշակ, **ակն ածելով** իզօրացն Հայոց» (Խոր., 277): Գրաբարում գործածվում էր նաև համադրական կազմությունը՝ «խնամք՝ հոգ տանել» լրացուցիչ իմաստով. «Տեսից զնա և **ակնածեցից** ի վերայ նորա» (ՆՀԲ, 1, 24)¹¹:

Արդի հայերենում **ակնածել** համադրական բարդությունը հիմնականում պահպանել է գրաբարյան հարադրության իմաստները՝ «պատկառել, ակնածանք տածել, քաշվել». հմմտ. «Ատոմը **ակնածեց** ականա՝ տեսնելով իր առջև անձնվեր մարդկանց» (ԴԴ, ԺՀԼԲԲ):

10 Տե՛ս **Стариченок В.**, Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, издат. «Феникс», 2008, էջ 601:
11 **Ակն ածել** հարադրության համաբանությամբ Ռաֆֆին գործածել է **աչք ածել** կազմությունը, ինչպես՝ «Երիտասարդը զարմանքով աչք **աճեց շուրջը**» (Ռ, 2, 255):

Ակն ունիս հարադրությունն ունի «հույս ունենալ, մի բանի հույսով սպասել» նշանակությունը. հմմտ. «Միանգամայն և **ակն ունէր** դիւթութեամբ վիկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայն» (Խոր., 50), «Նմին **ակն ունիսք**» (Եղ., 87): Գրաբարում գործածվում էր դրա համադրական կազմությունը՝ **ակնունիս** «աչքերն ուղղել հույսին. բարու կամ չարի ակնկալությամբ սպասել». «Դու մի՛ **ակնունիցիս** ողջանդա՛մ բարեմիտ ապրել» (Բ Մակ., 7, 19):

Գրաբարում կազմվել է **ակնկալել** համադրական բարդությունը՝ **ունիս** բայի երկրորդ հիմքի բառակազմական արժեքով՝ **կալ**. հմմտ. «**Ակնկալեսցի** իբրև զանձրև բարբառ իմ» (Օր., ԼԲ, 2):

Գրաբարի **ակնկալել** համադրական բարդությունը փոխանցվել է արդի հայերենին բառական նույն իմաստներով. հմմտ. «Քո գալստյան օրը պետք է լինի / Սարսափելի, բայց և հանդիսավոր այնքան, / Որքան հավատացյալ մարդու համար / **Ակնկալված** օրը Ահեղ դատաստանի» (ՊՍ, Գ, 162), «Եվ սրանցից ես **ակնկալում եմ** այդ շնորհը... Ունայն է հույսը և իզուր ջանքը» (ԴԴ, ԺՀԼԲԲ):

Զակն արկանել հարադրությունը գրաբարում նշանակում էր «աչքից հեռացնել, անտեսել». հմմտ. «Յընտանեսաց զաւակի քո **զակն մի՛ արկանիցես**» (Եսայի, ԺԸ, 7):

Նույն հարադրությունից հին հայերենում ունեինք **ակնարկեմ** համադրական կազմությունը՝ «աչքի նշանով՝ նշանացի հասկացնել, նայել, նկատել, նշմարել, տեսնել. իմաց տալ» իմաստներով. հմմտ. «Արտեւանունք քո արդար **ակնարկեսցեն**» (Առակ, Դ, 25), «Եւ **ակնարկէին** որսակցացն ի մես նաւն զալ օգնել նոցա» (Ղուկ., Ե, 7), «Եւ այսու մեզ այսպիսի իմն **ակնարկէ** կարգս վարդապետութեան Հոգւոյն» (Խոր., 87):

Արդի հայերենում ունենք **ակնարկել** համադրական կազմությունը՝ հետևյալ իմաստներով. 1. «հարևանցիորեն ասել՝ հասկացնել». հմմտ. «Զե՛ս խուսափի, Թորգո՛ւմ, դու այդ միակ ելքից,- / **Ակնարկելով** նորից երգը երեխեքի, / Ասաց Մկրտիչը» (ՊՍ, Գ, 104), «Շատ ծածուկ հավաքում էին այն գումարը, որի մասին գիշերվա կերուխումի ժամանակ **ակնարկել էր** քաղաքից եկած «մեծավորը»» (ԱԲ, ԺՀԼԲԲ), 2. «հայացքով կամ աչքի շարժումով նշան անել՝ մի

բան ցույց տալ». հմնտ. «Մայրը կրկին **ակնարկեց** որդուն, որ լռե» (Բ, ԺՀԼԲԲ)¹²:

Արդի հայերենում ունենք **ակնարկ** բարդությունը՝ գրաբարյան **ակնարկել** բայի երկրորդ հիմքի բառակազմական արժեքով՝ «հարևանցիորեն՝ կողմնակի կերպով ասված խոսք». «Ես չեմ խաբել ոչ մի խոսքով, / Ոչ մի երգով կամ **ակնարկով**» (ՊՍ, Ա, 215):

Ձեռն բաղադրիչով գրաբարում հանդիպում էին որոշակի հարադրություններ և համատիպ համադրական բարդություններ:

Ձեռն հասանել հարադրությունը նշանակում է «ձեռքը մի բանի հասնել», որից՝ **ձեռնհաս** բարդությունը՝ «ձեռներեց, կարող, ունակ» իմաստներով. հմնտ. «Ունևորաց և **ձեռնհասից** ամենայն մարդիկ իցեն սիրելիք» (ՆՀԲ, 2, 154), «Իբրև այլ ոչ ինչ էր **ձեռնհաս**, փախստական անկանէր առ արքայն Քուշանաց» (Եղ., 141):

Արդի հայերենում **ձեռնհաս** բարդությունը պահպանել է գրաբարյան իմաստը. հմնտ. «**Ձեռնհաս** մարդկանց միջոց տան ժողովելու» (ՀԹ, 6, 66):

Ձեռն արկանել (ի գործ) հարադրությունը գրաբարում նշանակում էր «ձեռնարկել, սկսել». հմնտ. «Այն ինչ լինէր նոցա զանաչառ զանողորմ **ձեռն** պատերազմի **ի գործ արկանել**» (Բ Մակ., Ժ, 29), «**Քանզի ձեռն արկանել** և ունել ոչ կարէր սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրտսերս յաւագաց» (Եղ., 16), «Բռնադատեաց զտկարութիւնս մեր տէրն Մամիկոնէից Վահան, սպարապետն Հայոցեւ մարզպան, **զձեռն արկանել ի գործ**» (Փապ., 6):

Բայական այդ հարադրությունից գրաբարում ունեինք **ձեռնարկ** «մի գործ ձեռնարկելը» և **ձեռնարկել** «ձեռնամուխ՝ ձեռներեց լինել» համադրական բարդությունները. «Խնդրէ ի նմանէ Հերակլ **ձեռնարկ** հաւատոյ»¹³ (Ասող., 87), «Ի պատերազմիլ ընդ նոսա **ձեռնարկեաց**» (Ա Եզր., Ա, 27):

Արդի հայերենում **ձեռնարկ** համադրական բարդությունը ձեռք է բերել նոր իմաստ՝ «դասագիրք, ուսումնասօժանդակ նյութերի ժողովածու». հմնտ. «Մեկն ուսած / Ուներ ամբիոն վարժապետի / Եվ երրորդը՝ լայն **ձեռնարկներ**» (ԱԻ, 2, 144):

12 Ընդհանրապես արդիհայերենյան համադրական կազմությունների բոլոր իմաստների ներկայացումը նոր բան չի ավելացնում դրանց կառուցվածքային պլաններին, հետևաբար բազմիմաստ բառերի դեպքում կբավարարվենք երկու-երեք իմաստային կիրառություն արձանագրելով:

13 Փոխաբերական իմաստով նշանակում է նաև «ստորագրություն, կնիք»:

ձեռնարկել կցական բարդության իմաստային դաշտն արդի հայերենում ընդլայնվել է «մի բան՝ նոր գործ սկսել» նշանակությամբ, ինչպես՝ «Մի շարք ուսումնասիրություններ **ձեռնարկել**՝ երկիրը, ժողովուրդը, գրականությունը...» (ՀԹ, ԺՀԼԲԲ):

Դնեմ գձեռն (ի վերայ ուրուք) հարադրությունը գրաբարում նշանակում էր «օրհնել, հոգևոր աստիճան տալ, մկրտել, ձեռնադրել»։ հմմտ. «Ջերիցութեան **ձեռն դնեմ ի վերայ քո**» (Բուգ., 226):

Այդ հարադրությունից գրաբարում կազմվել է **ձեռնադրեմ** համադրական բարդությունը՝ պահպանելով հարադրության բառական նշանակությունը. հմմտ. «**Ձեռնադրեցին** նոցա ըստ եկեղեցոյ՝ երիցունս» (Գործ., 14, 22):

Արդի հայերենում **ձեռնադրել** համադրական բարդությունը գործածվում է գրաբարյան իմաստով ու բառական արժեքով, ինչպես՝ «Եթե **չձեռնադրեք**, կթուրքանանք» (ՀԹ, 6, 58):

Հին հայերենում **ձեռն տալ** հարադրությունը (կայուն կապակցության արժեքով) նշանակում էր «ձեռնտու լինել, օգնել, աջակցել»¹⁴, ինչպես՝ «**Ձեռն ետու** նոցա հանել գնոսսա յերկրէն Եգիպտացոց» (Եգեկ., Ժ, 6), «**Ձեռն տուր** մեզ և դադարեցէ գունդն մոլեկան» (Ա Մակ., ԺԱ, 50):

Հին հայերենում ունեինք համադրական կազմություն՝ **ձեռնտու**՝ «օգնական, սատար» իմաստով, ինչպես՝ «Քիրամ արքայ Տիրոսի **ձեռնտու** էր Սողոմոնի» (Գ Թագ., Թ, 11), «Եւ **ձեռնտու** օգնական եղեն նմա ամենայն եղբայր նորա» (Ա Մակ., Գ, 2):

Հին հայերենում **ձեռնտու** կազմությունը **լինել** բայի հարադրությամբ արտահայտում էր **ձեռն տալ** կապակցության նշանակությունը, ինչպես՝ «**Ձեռնտու լինէր** նմա օգնականութիւն» (Ա Մակ., Ժ, 74), «**Ձեռնտու լինի** նմա և Եռասխ փայտիք մայրեաց վասն որոյ անաշխատ և երագ շինեալ՝ կանգնէն ի նմա մեհեան» (Խոր., 177):

Արդի հայերենում գործածվում է **ձեռնտու** համադրական կազմությունը՝ որպես գրաբարյան ժառանգություն՝ «նպատակահարմար, օգտակար, շահավետ, նպաստավոր» իմաստներով, ինչպես՝ «Ժամանակը **ձեռնտու** չէ ձեզ» (ԺՀԼԲԲ):

14 Որպես ազատ կապակցություն նշանակում է «ձեռքը տալ, հանձնել, մատուցել», ինչպես՝ «Եւ արք պարսիկք, որ փախուցեալ էին վասն քրիստոնեութեան և կային ի քաղաքի կայսեր, կալաւ և **ետ ի ձեռս** նորա» (Եղ., 7):

Ունկն անվանական բաղադրիչով գրաբարում հանդիպում է **ունկն դնել** հարադրությունը՝ «ականջ դնել, լսել» իմաստներով. հմնտ. «Լուարուք ձայնի իմում, կանայք Ղամեքայ, և **ունկն դիք** բանից իմոց» (Ծնն., Դ, 23), «Սառա **ունկն դնէր** առ դրան խորանին» (Ծնն., ԺԸ, 10)¹⁵:

Այդ հարադրության բաղադրիչների միաձուլմամբ գրաբարում ունեինք **ունկնդիր** բարդությունը («լսող, հնազանդ, աշակերտ, ատենակալ») և **լինել** բայի հետ՝ **ունկնդիր լինել** («լսել, ունկնդրել, հնազանդ լինել, ուշադրություն դարձնել») հարադրությունը. հմնտ. «Ամենայն ազինք ի տան թագաւորին **ունկնդիր** են հրամանաց թագաւորին» (Ա Մակ., Բ, 19), «Քննեսցի **յունկնդրացն** յատենի» (ՆԼԲ, 2, 551), «Եւ **ունկնդիր եղև** Աբրամ ձայնի Սարայի» (Ծնն., ԺԶ, 2), «**Ունկնդիր լիցիս** պատուիրանաց նորա» (Ելք, ԺԵ, 26):

Արդի հայերենին փոխանցվել են գրաբարյան **ունկնդիր**¹⁶ և **ունկնդրել** համադրական կազմությունները՝ ընդլայնելով բառական իմաստները: Այսպես՝ **ունկնդիր** – 1. «Մեկի խոսքերին՝ երգին՝ նվագին լսող». «Այնինչ բնության գվարթ համերգի / **Ունկնդիրն** անխոս, հավիտենական, / Ժայռը մտախոհ՝ իր մռայլ մտքի / Ետևից ընկած՝ լսում է նրան» (ԸԹ, 1, 51): 2. «Բուռական համակարգի ուսանող՝ ազատ կարգավիճակով». «Գեղեցիկ շարասյուն կազմած՝ անցնում են գինվորական ակադեմիայի **ունկնդիր** սպաները» (մամուլ): 3. «Հրապարակային դասախոսություն լսող». «Ջեկուցողի միալար ձայնից կախվում էին **ունկնդիրների** գլուխները» (ԱԲ, ԺԼԼԲԲ), «Եվ լուսինն, աստղերն, ամպեր խմբովին, / **Ունկնդիր էին** նրա սուրբ երգին» (ԸԹ, 1, 272): 4. «Անսացող, հլու, հնազանդ». «Թող որ մեռնեն հուր-կայծակից... հանկարծակի, / Այնքան արդար, խղճիս ձայնին միշտ **ունկնդիր**» (ՊՍ, Ա, 362):

Արդի հայերենում **ունկնդրել** համադրական կազմությունը պահպանել է գրաբարյան **ունկնդիր լինել** հարադրության բառական իմաստները. հմնտ. «Մեկի ձեռքին գուլպան կիսատ, / Մյուսներին՝ գիրք, լրագիր, / **Ունկնդրում են** նվագին» (ՊՍ, Գ, 56):

Ծուներ բաղադրիչով գրաբարում ունեինք **ծուներ դնել** հարադրությունը՝ «ծնկի իջնել՝ աղոթելու, երկրպագելու», ինչպես՝ «Եւ երիս

¹⁵ Արդի հայերենում գործածվում է որպես հնաբանություն, ինչպես՝ «Հովի գրոյցին **ունկն դնելով**՝ Աբու Մահարին խոսում էր անձայն» (ԱԻ, 2, 65):

¹⁶ Արդի հայերենում **ունկնդիր** բառի իմաստային դաշտից դուրս է եկել «ատենակալ» իմաստը. տեղի է ունեցել բառիմաստի նեղացում:

Ժամանակաշրջանի **դնէր ծունր**, և կայր յաղօթս» (Դանի., 6, 10), «**Եղ ծունր**, աղաղակեաց ի ձայն բարձր. Տէ՛ր, մի՛ համարիր դոցա զայս մեղս» (Գործ., Է, 59):

Հարադրության բաղադրիչների ձուլմամբ արդի հայերենում ունենք **ծնրադրել**//**ծնրադնել** համադրական կազմությամբ բայական տարբերակները և **ծնրադիր** մակբայը: **Ծնրադրել** կցական բարդությունն արդի հայերենում բազմիմաստ է և խոսքում հանդես է գալիս ուղղակի և փոխաբերական իմաստներով. հմմտ. 1. «Աղոթքի՛ աղերսանքի համար ծունկի իջնել՝ գալ»: 2. «Փխր. Ծնկի իջնելով ողջունել կամ հարգանք մատուցել». «Այլասերիլ կոչեցեք զայն, եթե կը փափագիք, բայց չեք կրնար **չի ծնրադրել** անոր առջև» (ԳԶ, ԺՀԼԲԲ): 3. «Փխր. Պատել, փովել, տարածվել». «**Ծնրադրել է** խավարը խոժոռ Աղոթարարի ջերմեռանդությամբ» (ՊՍ, Դ, 209):

Ծնրադիր բարդությունն ունի հատկանշային արժեք և նշանակում է՝ 1. (մկբ.) «ծնկների վրա իջած, ծնկաչոք». «Բոլորը **ծնրադիր** համբուրում են այդ մի բուռ հողը» (ԱԻ, ԺՀԼԲԲ), 2. (ած.) «փխր. ծնկաչոք կատարվող՝ կատարված». «Մահ պետք է համասփռենք հոն, ուր մեր ստրուկի **ծնրադիր** պաղատանքները չի հասան» (Ս, ԺՀԼԲԲ):

Ծնրադիր սերող հիմքով ունենք **ծնրադրություն** ածանցավոր կազմությունը՝ «ծունր դնելը, ծնրադրելը՝ աղոթելու համար» նշանակությամբ. հմմտ. «Այդ նրա հանապազօրյա սաղմոսերգությունն է, փառաբանությունը աստծուն, որ կատարում է **ծնրադրությամբ** և երկրպագությամբ» (Բ, ԺՀԼԲԲ):

Արին բաղադրիչով գրաբարում ունեինք **հեղույ զարին** և **ըմպել զարին** բայական հարադրությունները, որոնց բաղադրիչների ձուլմամբ ստեղծվել են համարժեք կցական բարդությունները՝ **արյունահեղ, արյունարբու, արյունախում**:

Հեղույ զարին նշանակում է «սպանել, կոտորել», որ պայմանավորված է **արին** բառի փոխաբերական իմաստով՝ «սպանություն, կոտորած». հմմտ. «Որ **հեղույ զարին** մարդոյ փոխանակ արեան նորա» (Ծնն., Թ, 6), «**Հեղումն արեան** իրեանց եղև ի պարծանս վերնոցն և ներքնոց» (Եղ., 113), «Մի լիցի պղծութիւն և գայթակղութիւն ի սրտի Տեառն ինոյ **հեղույ զարին** արդար տարապարտուց» (ԱԹագ., ԻԵ, 31):

Հարադրության բաղադրիչների (բայական բաղադրիչի բայահիմքի) ձուլմամբ գրաբարում կազմվել է **արինահեղ** բառը՝ «մարդասպան» իմաստով. հմմտ. «Եւ խնդրեցից ի քէն գվրէժ շնացելոյ և **արինահեղի** և եղից զքեզ յարին քո» (Եզեկ., ԺԶ, 38):

Արյունահեղ բառն այդ նույն իմաստը պահպանել է արդի հայերենում. «Ու պիտի խառնեն դարձյալ ու կրկին / **Արյունահեղին** և իր լակոտի ընպելիք սուրճին» (ՊՍ, Դ, 307): Բառիմաստի ընդլայնմամբ այն ձեռք է բերել նաև «արյունալի, արյունոտ» հատկանշային իմաստները, ինչպես՝ «**Արյունահեղ** պատերազմ» (մամուլ):

Արյունահեղ սերող հիմքով ունենք **արյունահեղություն** ածանցավոր կազմությունը՝ «համատարած սպանություն, ջարդ, կոտորած» իմաստներով. հմմտ. «**Արյունահեղություն**, կոտորած, ցավ, թույն, ամեն բան կգործադրի (Վասակը) իր նպատակին հասնելու համար» (ԴԴ, ԺՀԼԲԲ):

Ընպել գարին հարադրությունը գրաբարում ուղղակի իմաստով նշանակում էր «արյուն խմել՝ ընպել». հմմտ. «Եւ ձեռն պարսկական ոչ վաստակէր զբազմախողխող երկաթն **արեամբ արբուցանել**» (Խոր., 290), «**Արբցեն գարին** սոցա իբրև զգինի» (ՆՀԲ, 1, 764):

Գրաբարում հարադրության բայական բաղադրիչի երկրորդ հիմքով (արբ) կազմվել է **արինարբու** (ածանցավոր) բառը՝ «արյունախում, արյունահեղ, փխբ. գազան» իմաստներով. հմմտ. «Ձեմք մարդատեացք իբրև զգազանս շաղղակերս և **արինարբուս**» (Եղ., 165), «Որոց զօրագլուխ էր **ընպել գարին արինարբու** և այսակիրն Մահմետ» (Ղեւ., 19):

Արդի հայերենում **արյունարբու** բառը գործածվում է գրաբարյան իմաստներով՝ «արյունոտ, արյունախում, գազանաբար», ինչպես՝ «Կուրծք տվեցին զորքերին **արյունարբու** արքայի» (ԵԶ, ԺՀԼԲԲ):

Արդի հայերենում **ընպել-արբել-խմել** հոմանիշների իմաստային ընդհանրության հիման վրա համաբանությամբ կազմվել է **արյունախում** բառը՝ «արյունարբու» նշանակությամբ. «Ելդըզ քյոշքի տերն **արնախում** ու սևանուն / Սալոնիկում իր ձեռքերն էր դեռ լվանում» (ՊՍ, Դ, 159):

Դէմք բաղադրիչով գրաբարում ունեինք **ի դիմի հարկանել, դէմ դնել** հարադրությունները, որոնք արդի հայերենում արդեն կցական բարդություններ են: Այսպես՝ **ի դիմի հարկանել** հարա-

դրությունը հանդես էր գալիս «դիմացը լինել՝ գտնվել, հակառակվել» իմաստներով. հմմտ. «Այր ամպարիշտ յանդգնութեամբ **հարկանի ի դիմի**» (Առակ, ԻԱ, 29), «Սմա ճակատու պատերազմի **ի դիմի հարեալ** Արամ, հալածական ընդ մէջ Կորդուաց ի դաշտն Ատրեստանի արկանէ» (Խոր., 45):

Արդի հայերենում ունենք դրանից առաջացած **դիմահար** համադրական կազմությունը (*ի նախդրի կորստով*)՝ հարադրության բաղադրիչների սուուգաբանական իմաստներով՝ «դեմ առ դեմ բախվող, ընդհարվող. ուղիղ՝ դեմքի ուղղությամբ». հմմտ. «Նա իրեն նետեց լռած հրանոթի հետևը և **դիմահար** կրակով սկսեց ոչնչացնել իր վրա եկող գերմանական տանկերը» (ՎԱ, ԺՀԼԲԲ):

Դեմ դնել հարադրությունը նշանակում էր «դիմել ուղիղ որևէ տեղ (դեմքի ուղղությամբ)». հմմտ. «Եւ եղիցին ամենայն արք որք **դէմ եղին** մտանել յերկիրն եգիպտացոց» (Երեմ., ԽԲ, 17), «Եւ Յակոբու **դէմ եղեալ** առ արքայ, առաւել ևս զչարի Մանաճիիր» (Խոր., 246):

Արդի հայերենում ունենք **դիմադրել** համադրական բարդությունը՝ կազմված գրաբարյան հարադրության բաղադրիչների ձուլմամբ, իմաստային որոշակի տարբերակումով՝ «1. դիմադրություն ցույց տալ, 2. ընդդիմանալ, հակառակվել». հմմտ. «Ապստամբներն իրենց ընտանիքներով ապաստանում են լեռները և երկար **դիմադրում**» (ԱԻ, ԺՀԼԲԲ):

Գրաբարյան **յակն առնում** հարադրությունը բազմիմաստ է՝ «լավ աչքով նայել, սիրել, բարեհաճել, խնամք տանել. աչքը վրան պահել». հմմտ. «Մեծապէս արքայ Շապուռի **յակն առեալ** սիրէր զնա» (Բուգ., 107), «**Յակն առեալքդ** և սիրեցեալքդ ի Տէր խնդալ» (Ագաթ., 427):

Բաղադրիչների ձուլմամբ գրաբարում ունեինք **ակնառու** ածանցավոր կազմությունը՝ «լավ աչքով նայող. հոգ տանող» իմաստներով. հմմտ. «Դատաւոր **ակնառու**, ռամիկ ինքնագործ» (Նար., 141):

Արդի հայերենում գործածական է գրաբարյան համադրական կազմությունը՝ **ակնառու**՝ «աչքի ընկնող, նշանավոր, ուշագրավ» իմաստներով. հմմտ. «Դրանից հետո **ակնառու** քաղաքական-ռազմական լուրջ, մեծ գործեր չկան» (ՍԶ, ԺՀԼԲԲ):

Գրաբարում **ակնառու** բառի համաբանությամբ կազմվել է նույնիմաստ **աչառու** բարդությունը՝ **ակն//աչ(ք)** տարբերակների փոխարինումով, ինչպես՝ «Եպիսկոպոսք յայնմ ժամանակի եղիցին **աչառութ**» (ՆՀԲ, 1, 266):

Արդի հայերենում **աչառու** բառը հանդես է գալիս իմաստային տարբերակմամբ՝ «երեսպաշտ, կողմնակալ, անարդարամիտ». հմմտ. «Բայց, իհարկե, ոչ մի քննադատ, որքան և չար լինի նա և **աչառու**, չի կարող ոչնչացնել այն գրողին, որը դեռ ապրելու կյանք ունի» (ՎՏ, ԺՀԼԲԲ):

Այսպիսով՝ հին հայերենի վերլուծական կառույցների փոխակերպման իրողության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման ընթացքում այդ կառույցների մի մասը վերածվել է կցական բարդությունների: Ընդ որում, դրանց արտահայտության պլանների փոփոխություններն արձանագրվել են ինչպես լեզվի համաժամանակյա (հին հայերենի շրջանակներում), այնպես էլ տարժամանակյա (գրաբար-արդի հայերեն) կտրվածքներում:

Վերլուծական կառույցներից որոշակի յուրահատկություն են դրսևորում այն կապակցությունները, որոնց արտահայտության պլաններում կան **մարմնամասերի անվանումներ (ակն, ձեռն, ունկն, ծունր, արին, դէմք** և այլն): Այդպիսի կապակցություններից սերած կցական բարդությունները կազմվել են տարբեր կառուցատիպերով՝ **բաղադրիչների ձուլմամբ (ակն ածել > ակնածել, ձեռն հասանել > ձեռնհաս)** և **ածանցմամբ (յակն առնում > ակնառու//աչառու, ըմպել զարին > արինարբու)**:

Դիտարկված վերլուծական կառույցները հին հայերենում փոխակերպվել են համադրական (կցական) բարդությունների և հին հայերենի բառային կազմի հետ փոխանցվել արդի հայերենին՝ պահպանելով բաղադրիչների իմաստներն ու դրանց շարահյուսական հարաբերությունները, կամ էլ մասնակիորեն ենթարկվել են իմաստափոխության՝ դրսևորելով իմաստային նրբերանգներ սերիչ կաղապարների համեմատ:

Լալիկ Մ. Խաչատրյան – հրատարակել է 20 գիրք (դպրոցական և բուհական դասագրքեր, ձեռնարկներ, բառարաններ, մենագրություններ), տպագրել շուրջ 180 գիտական հոդված հանրապետության և արտերկրի գիտական հանդեսներում: Զբաղվում է ընդհանուր լեզվաբանության, հա-

յոց լեզվի պատմության և լեզվի տեսության հարցերով: Հետաքրքրությունների շրջանակներում են գրաբարի տիպաբանությունը և Աստվածաշնչի բառային կազմի զուգադրական քննության հարցերը ռոմանագերմանական լեզուների համեմատության համատեքստում:

Էլ. հասցե՝ lingualal51@mail.ru

Summary

**TYOLOGY OF ANALYTICAL STRUCTURES AND
HOMOGENOUS COMPOUND WORDS WITH SOMATIC
COMPONENTS OF THE OLD ARMENIAN LANGUAGE**

(Diachronic and synchronic aspects)

Lalik M. Khachatryan

Doctor of Sciences in Philology

Key words – typology, transformation, generative model, analytical structure, somatic component, compound verbs, change of meaning, word-building type.

The article discusses the transformation of the analytical structures of the Old Armenian language into compound words. The phenomenon of transformation is analyzed both in Grabar and in the modern Armenian literary language. *Ակն, ձեռն, ունկն, ծունր, արիւն, դէմք* and other words act as somatic components of verbal juxtapositions.

The study shows that the compound words being as a result of transformations were formed by the following word-building types.

a) In one case, complications were formed by assimilation of components, such as: *ակն ւծել > ակնւծել, ակն ունիւմ > ակնունիւմ, զակն արկանել > ակնարկել, ձեռն հասանել > ձեռնհաս, դնել զձեռն (ի վերայ ուրուք) > ձեռնադրել etc.,*

b) In another case, the complications are derivative formations; these words are not used in the language without a derivative suffix *-ու*, such as: *յակն առնում > ակնառու // աշառու, ընպել զարիւն > արիւնարբու etc.*

The considered word combination in the Old Armenian language turned into associative word complexities and switched to the Modern Armenian, retaining the meanings of the components and their syntactic relations, or partially underwent a change in meaning, showing semantic nuances in relation to generative patterns.

The study of typology of analytical structures and homogenous compound words with somatic components in Armenian language is emphasized in historical lexicology, in particular, in the space of historical word-building.

Резюме

**ТИПОЛОГИЯ АНАЛИТИЧНЫХ КОНСТРУКЦИЙ И
ГОМОГЕННЫХ СЛОЖНЫХ СЛОВ С СОМАТИЧЕСКИМИ
КОМПОНЕНТАМИ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА**

(Диахронический и синхронический аспекты)

Лалик М. Хачатрян

Доктор филол. наук

Ключевые слова – типология, трансформация, аналитическая конструкция, генеративная модель, именно-глагольное сопоставление, соматический компонент, составные глаголы, изменение значения, структурный тип.

В статье рассматриваются преобразования аналитических структур древнеармянского языка в сложные слова. Явление трансформации рассматривается как на уровне грабаря, так и в современном армянском литературном языке. В сферу исследования вошло именно-глагольное сопоставление, в плане выражения которого присутствуют соматические компоненты. Как соматические компоненты в вербальных сопоставлениях выступают *սկի, ձեռն, ունկի, ծոնր, արիւն, դէսք* и другие слова.

Исследование показывает, что сложные слова, возникшие в результате трансформации, были сформированы следующими структурными типами:

ա) в одном случае сложные слова сформировались путем ассимиляции компонентов, например: *ակն ածել* > *ակնածել*, *ակն ունիւմ* > *ակնունիւմ*, *զակն արկանել* > *ակնարկել*, *ձեռն հասանել* > *ձեռնհաս*, *դնել զձեռն* (*ի վերայ ուրուք*) > *ձեռնադրել* и т.д.;

б) в другом случае осложнения являются производными образованиями: эти слова не употребляются без суффикса *-ու*, например: *շակն անոււմ* > *ակնանու* // *աչանու*, *ընպել զարիւմ* > *արիւնարու* и т.д.

Рассматриваемые словосочетания в древнеармянском языке превратились в соединительные сложные слова и перешли в современный армянский язык, сохраняя значения компонентов и их синтаксические отношения, или же частично подверглись смысловым изменениям, проявляя смысловые оттенки в отношении генеративных моделей.

Изучение типологии аналитичных конструкций и гомогенных сложных слов с соматическими компонентами древнеармянского языка имеют существенное значение с точки зрения исторической лексикологии, в частности, в области общего описания исторического словообразования.

REFERENCES

1. **Abeghyan M.**, Hayots' lezvi tesut'yun, Yer., "Mitk'" hrat., 1965 (**In Armenian**).
2. **Abrahamyan A.**, Bayč zhamanakakits' hayerenum, g. A, Yer., Haykakan SSR GA hrat., 1962 (**In Armenian**).
3. **Aghayan Ēd.**, Ēndhanur yev haykakan bařagitut'yun, Yer., Yerevani hamalsarani hrat., 1984 (**In Armenian**).
4. **Jahukyan G., Aghayan Ēd. yev urishner**, Hayots' lezu, I mas, A prak, Yer., "Luys" hrat., 1980 (**In Armenian**).
5. **Jahukyan G.**, Zhamanakakits' hayereni tesut'yan himunk'nerč, Yer., Haykakan SSR GA hrat., 1973 (**In Armenian**).
6. **Murvalyan A.**, Hayots' lezvi dardzvatsabanut'yun yev bayakazmut'yun, Yer., Haykakan SSR GA hrat., 1959 (**In Armenian**).
7. **Petrosyan H.**, Hayerenagitakan bařaran, Yer., "Hayastan" hrat., 1987 (**In Armenian**).
8. **Starichenok V.**, Bol'shoj lingvisticheskij slovar', Rostov- na-Donu, izdat. "Feniks", 2008 (**In Russian**).

Համառոտագրություններ

Ա. Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

ա) Աստուածաշունչ մատյան

Առակ – Առակք Սողոմոնի

Ա Եգր. – Եգր

Գործ. – Գործք Առաքելոց

Դանի. – Դանիել

Եզեկ. – Եզեկիել

Երեմ. – Երեմիա

Թագ Ա, Գ – Թագաւորութեանց Ա, Գ

Ծնն. – Ծնունդք

Ղուկ. – Աւետարան Ղուկասու

Մակ Ա, Բ – Գիրք Մակաբայեցոց Ա, Բ

Օր. – Երկրորդումն Օրինաց

բ) Հին հայերեն մատյաններ

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիփսիս, 1909:

Ասող. – Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Եր., 2000:

Բուզ. – Փաւստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:

Եղ. – Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., 1957:

Խոր. – Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիփսիս, 1913:

Ղեւ. – Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, ի տպարանի Ի. Ն. Սկորոխոդովի, 1887:

Փարպ. – Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրթ առ Վահան Մամիկոնեան, Տիփսիս, 1904:

գ) Ժամանակակից հայերենի հեղինակներ

ԱԲ – Ա. Բակունց

ԱԻ – Ավ. Իսահակյան

ԳԶ – Գր. Զոհրապ

ԴԴ – Դ. Դեմիրճյան

ԵԶ – Ե. Զարենց

ՀԹ – Հովհ. Թումանյան

ՊՍ – Պ. Սևակ

Ս – Սիամանթո
ՍԶ – Ստ. Զորյան
ՎԱ – Վ. Անանյան
ՎՏ – Վ. Տերյան
Բ – Բաֆֆի

Բ. Բառարաններ

ՆՀԲ – Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրություն երից վար-
դապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ արքահօր Հ. Գաբրիէլի
Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հատ. Ա-Բ,
Վենետիկ, 1836-1837:

ԺՀԼԲԲ – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան,
հատ. 1-4, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:

Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, հատ. 1-2,
Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 1981-1982:

Բաղդասարյան Ա., Հայկական համաբարբառ, Ավետիք Իսահակյան,
Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 1976:

Պետրոսյան Լ., Հովհ. Թումանյանի երկերի բառարան, Եր., Հայկական
ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 1976: